ՄԻ ՊՏՈՅՏ ՔԱՂԱՔՈՒՄ

Առաւօտը շատ վաղ ջինրիկիշաները արդէն խմբւել էին լուսամուտների տակ, ուշադիր մեր դուրս գալուն, եւ հէնց որ երեւացինք դռների մէջ, նրանք ուրախ վազ տւին դէպի մեզ, իրար առաջը կտրելով:

Առանց վարանումի չէր, որ մենք տեղի տւինք նրանց խնդրանքին ու հեծանք թեթեւ կառքերը:

Ջինրիկիշաները իսկոյն հանգստացան. սրբւեց նրանց դէմքից պաղատանքի արտայայտութիւնը, եւ մեզ մի թեթեւ ու խնամածու ժպիտ ճօնելով՝ աշխոյժ լծւեցին ու առաջ վազեցին:

Աջ ու ձախ երեւում ու աչքից կորչում էին չինացի դերձակների ու կօշկակարների աշխատանոցները իրենց ցուցանակներով եւ այլ այդ կարգի ուրիշ խանութներ, որոնք ծառայում են եւրոպացիների պէտքերին: Ջինացիք շատ վարժ եւրոպական շորեր են կարում, ճարպիկ կերպով յարմարւելով մեր ճաշակին ու տարազին, որ նրանց համար այնքան խորթ է:

Այդ տեսակէտից առանձին յաջողութիւն ունեն կնոջ հագուստ կարողները, այնպէս որ եւրոպուհիք յօժարութեամբ դրանց են յանձնում իրանց արդուզարդը:

Ուրախ է կեանքը եւրոպական թաղում:

Անթիւ գարեջրատների բաց դռներից դուրս են խուժում հարբած երաժիշտների հնչիւնները, որի չափի տակ զւարթ պարում են գլուխները տաքացած օտարազգի նաւաստիները:

Մենք արագ անցանք կամրջով այն բազմաթիւ ջրանցքներից մէկը, որոնք ցանցի պէս կտրտում են քաղաքը, եւ մտանք արդէն զուտ ճապոնական մասը: